

որ Կոլոտ ուղղակի հոն, Ամբաստանի մէջ սնած էր անոնցմով, մինչ Գօշը՝ Էջմիածնի մէջ, սւր Ամբաստանէն գացող վարդապետներ պատուաստեցին Բարսեղ Աղբակեցւոյ եւ Վարդան Բաղիշեցւոյն դպրոցը:

Սիմոն կաթողիկոս, Կոլոտի չափ գիւնանագէտ մը չէր: Հետեւաբար իրերը բոլորովին սխալ կը մեկնէ, Մեծագործ Պատրիարքի մը խելացիութիւնը՝ խորամանկութիւն կը նկատէ. Կենցաղ-գիտութիւնը՝ շոգմոգութիւն ու կեղծաւորութիւն. «Վարդան-Բաղիշը՝ խաբէութիւն»:

Սիմոնի սրտին բոլոր ցաւն այն է որ Կոլոտ ինչո՞ւ Պոլիս ժողով գումարեց Աստուածատուր Կաթողիկոսի մահուանէն ետքը, եւ Ուլնեցի Կարապետ Եպս.՝ Կաթողիկոս ընտրուեցաւ: Եւ ինչո՞ւ ինքն՝ Կոլոտ հանեց Կարապետ Կաթողիկոսին պաշտօնը վաւերացրնող կայսերական հրովարտակը, եւ այլն: Որովհետեւ հրովարտակի խնդրին մէջ Կաթողիկոսական իրաւանց բռնաբարում կամ սեղմում կը նկատէ Սիմոն Կթղ.: Եւ որպէսզի իր խօսքերսւն կշիռը ծանրացընէ «յայն Կոստանցի» ձգտումներ կը տեսնէ նոյն իսկ Ուլնեցւոյ ընտրութեան մէջ եւ ձրի ակնար-

---

1 Սիմոն Կաթողիկոս՝ Մխիթար (Գօշ) վարդապետի պէս ԺԺԺ-է ըլլալուն համար Գօշ ըստւած է: Սիմոն լաւ քարոզչի համբաւ ալ ունի. երկու հատորով քարոզներու հաւաքածոյ մը յօրինած է Էջմիածնի նուիրակներուն համար: Սիմոն Կթղ. իր վարդապետութեան ատեն 1752 Երուսաղէմ ուխտիկներթալ, ուր պատրիարք էր՝ Նալբանու Աստուածաբանը, արդէն լսած «քեօսա» Սիմոնի համբաւը՝ Ս. Յակոբայ մէջ Սիմոն վրդ. ի մէկ քարոզը լսելէ ետքը իր մատանին, փիլոնը եւ գաւազանը կը նուիրէ անոր՝ քաջալերելու համար: Եւ օր մը, երբ ուխտաւորները լաւ քարոզիչ մը կ'ուզեն պատրիարքէն՝ սա Սիմոնը կը յանձնարարէ: Բայց ուխտաւորներ կ'ուզեն որ թաւամազ Մովսէս վրդ. ը տայ իրենց: Նալեան սապէս կը սրամտէ. «Ժարդ կ'ուզէք՝ ԺԺԺԺ. ԺԺԺԺ կ'ուզէք՝ Մովսէս»: (Գիտան Գ. էջ 54):